# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
## ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

0095, Ք.Երևան, Մ.Բաղրամյան պող., 19


Հայաստանի Հանրապետության

Ազգային Ժողովի նախագահ

Արարատ Միրզոյանին

Հարգարժան պարոն Միրզոյան,

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածների պահանջները՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացնում եմ «Ազգային ժողովի կանոնակարգ սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ գրությանը կցվում են.

ա) նախագիծը՝ հիմնական զեկուցող Հերիքնազ Տիգրանյան,
բ) նախագծի ընդունման հիմնավորումը,
գ) գործող օրենքի փոփոխվող հոդվածի մասին տեղեկանքը:

Խնդրում եմ օրինագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Հարգանքով՝ Հերիքնազ Տիգրանյան

7-ը մայիսի 2021

*Նախագիծ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հոդված 1.* «Ազգային ժողովի կանոնակարգ» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-9-Ն սահմանադրական օրենքի 81-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Առաջին ընթերցմամբ ընդունված օրենքի նախագծի վերաբերյալ՝ ընդունվելուց հետո երկշաբաթյա ժամկետում գրավոր առաջարկ ներկայացնելու իրավունք ունեն հեղինակը, խմբակցությունը, Կառավարությունը և պատգամավորները:»:

2) ուժը կորցրած ճանաչել 2-րդ մասը:

*Հոդված 2.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

1. Առկա իրավիճակը իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքը ընդունվել է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին, որի 81-րդ հոդվածի առաջին մասը, այդ պահին գործող խմբագրությամբ, սահմանում էր, որ առաջին ընթերցմամբ ընդունված օրենքի նախագծի վերաբերյալ գրավոր առաջարկ ներկայացնելու իրավունք ունեն խմբակցությունը և Կառավարությունը, իսկ պատգամավորը իրավունք ուներ առաջարկ ներկայացնել շրջանառության մեջ դրված նախագծի փոփոխված դրույթների վերաբերյալ: Այսինքն՝ երկրորդ ընթերցումից առաջ սահմանված էր առաջարկ ներկայացնելու լիազորությամբ օժտված սուբյեկտային նեղ կազմ՝ նման լիազորություն չտրամադրելով անգամ նախագծի հեղինակ պատգամավորին: Իսկ այլ պագամավորների՝ առաջարկ ներկայացնելու իրավունքը սահմանափակված էր փոփոխված դրույթների շրջանակով:

2018 թվականի հունվարի 17-ին հիշյալ հոդվածում կատարվել է փոփոխություն, որով սուբյեկտային կազմը լրացվել է, և նախագծի հեղինակին ևս իրավունք է տրվել առաջինից երկրորդ ընթերցման ընթացքում, սահմանված ժակետում առաջարկ ներկայացնել նախագծի վերաբերյալ, սակայն մյուս պատգամավորները նորից մնացել են գործող սահմանափակման մեջ: Ավելին, հիշյալ փոփոխությամբ ավելացվել է ՄԻԱՅՆ բառը, հստակեցնելով և ևս մեկ անգամ շեշտադրելով, որ առաջարկները կարող են վերաբերել նախագծի Միայն փոփոխված դրույթներին:

Հետևաբար, գործող իրավակարգավորումների համաձայն՝ նախագծի հեղինակ չհամարվող պատգամավորը շրջանառվող նախածի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ կարող է անել միայն առաջին ընթերցման համար, իսկ դրանից հետո իր առաջարկը կարող է վերաբերվել ոչ թե նախագծին ընդհանրապես, այլ միայն նախագծի փոփոխված դրույթներին:

Նման իրավակարգավորումը որևէ իրավաչափ նպատակ չի հետապնդում, փոխարենը՝ սահմանափակում է պատգամավորի իրավաստեղծ գործունեությունը՝ կաշկանդելով նախագծի քննարկման կոնկրետ փուլում տեսակետ հայտնելու, առաջարկ ներկայացնելու իրավունքի իրացումը: Շրջանցելու համար այս արգելքը, գործականում պատգամավորը ստիպված է լինում իր առաջարկը ձևակերպել խմբակցության կամ այդ փուլում իրավասու այլ սուբյեկտի անունից, եթե վերջիններս առաջարկի հետ կապված առարկություններ չունեն: Հակառակ պարագայում առաջարկը որևէ կերպ չի կարող ներկայացվել և քննարկվել:

Բացի այդ, երբեմն գործնականում ծագում է իրավական վեճ՝ պատգամավորի ներկայացված առաջարկը վերաբերում է բուն նախագծին, թե նախագծի փոփոխված հոդվածին, քանի որ նախագիծը լրամշակման ընթացքում կարող է էապես տարբերվել նախնական տարբերակից:

2. Կարգավորման նպատակները, ակնկալվող արդյունքը.

Առաջարկվող կարգավորումը հնարավորություն կընձեռնի օրինագծի ոչ հեղինակ պատգամավորին ևս գրավոր առաջարկ ներկայացնելու նախագծի վերաբերյալ:

ՏԵՂԵԿԱՆՔ

Օրենքի փոփոխվող նորմի վերաբերյալ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔ

Հոդված 81. Առաջին ընթերցմամբ ընդունված օրենքի նախագծի վերաբերյալ գրավոր առաջարկներ ներկայացնելը

1. Առաջին ընթերցմամբ ընդունված օրենքի նախագծի վերաբերյալ ընդունվելուց հետո երկշաբաթյա ժամկետում գրավոր առաջարկ ներկայացնելու իրավունք ունեն հեղինակը, խմբակցությունը, ~~և~~ Կառավարությունը~~, ինչպես նաև հեղինակից բացի, մյուս~~ և պատգամավորները~~՝ շրջանառության մեջ դրված նախագծի միայն փոփոխված դրույթների վերաբերյալ:~~

~~2. Գրավոր առաջարկները կարող են ներկայացվել նախագծի առաջին ընթերցմամբ ընդունվելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում:~~

2.1. Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի կամ նիստի օրակարգում միևնույն օրենքի նախագծի առաջին և երկրորդ ընթերցմամբ քննարկելու մասին հարցերն ընդգրկվելու դեպքում գրավոր առաջարկները կարող են ներկայացվել համապատասխանաբար Կանոնակարգի 41-րդ հոդվածի 6-րդ կամ 44-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված Ազգային ժողովի որոշմամբ սահմանված ժամկետում:

2.2. Եթե առաջին ընթերցմամբ ընդունված օրենքի նախագծի երկրորդ ընթերցմամբ քննարկելու մասին հարցն ընդգրկվել է Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի կամ նիստի օրակարգում, և սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետը չի լրացել, ապա գրավոր առաջարկները կարող են ներկայացվել արտահերթ նստաշրջանի կամ նիստի օրակարգի, ինչպես նաև օրակարգային հարցերի նախագծերն Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվելուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում:

3. Սույն հոդվածի 2-րդ և 2.2-րդ մասերով սահմանված ժամկետները կարող են փոխվել հեղինակի կամ գլխադասային հանձնաժողովի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի որոշմամբ: Ժամկետը փոխելու վերաբերյալ առաջարկը քվեարկության է դրվում առանց քննարկման՝ նախագծի առաջին ընթերցմամբ ընդունվելուց անմիջապես հետո:

*(81-րդ հոդվածը խմբ., փոփ., լրաց. 17.01.18 ՀՕ-50-Ն)*